VEOLIA
Ջուր

**Հավելված №2**

*Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի N379Ն որոշման*

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ (ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
## (ՄԱՏԱԿԱՐԱՐ- ՈՉ ԲՆԱԿԻՉ ԲԱԺԱՆՈՐԴ)

**Հաշվառման քարտ N** 2-10-25 ([illegible])

[illegible]
(պայմանագրի կնքման վայրը)

«01» 04 2021թ.

Մատակարարը՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ Ք.Երևան,Աբովյան 66ա

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)

ի դեմս Գլխավոր տնօրեն Մարիաննա Շահինյանի, որը գործում է

(անունը, ազգանունը, պաշտոնը)

Ընկերության կանոնադրության և ԼՋ N 0001 Լիցենզիայի

(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

հիման վրա ,մի կողմից, և բաժանորդը՝ [illegible]

(իրավաբանական անձի կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող)

[illegible],

(կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանումը (անունը, ազգանունը), գտնվելու

(բնակության) վայրը, միացման կետի հասցեն)

ի դեմս [illegible],

(պաշտոնը, անունը, ազգանունը)

որը (ով) գործում է [illegible] հիման վրա,

(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

մյուս կողմից, համատեղ կոչվելով կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սույն պայմանագրում օգտագործվող հիմնական հասկացություններն են.

1) **հանձնաժողով՝** Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.

2) **կանոններ՝** հանձնաժողովի կողմից հաստատված խմելու ջրի մատակարարման եվ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոններ.

3) **առևտրային հաշվառքի սարք՝** պետական չափագիտական մարմնի կողմից ստուգաչափված ու կապարակնքված Խմելու ջրի քանակի հաշվառքի սարք, որի նույնականացման տվյալներն ամրագրվում են սույն պայմանագրում.

4) **առևտրային հաշվառքի սարքի խախտում՝** պետական չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությամբ հաստատված առևտրային հաշվառքի սարքի առանձին մասի խափանումը կամ վնասումը, կամ կապարակնիքի բացակայությունը կամ վնասումը, կամ կեղծումը, կամ սարքի բնականոն աշխատանքի որևէ այլ խաթարումը՝ արտաքին միջամտությամբ կամ առանց դրա.

5) **հաշվարկային ամիս՝** ժամանակահատված, որը սկսվում է օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը 00:00-ին և ավարտվում է վերջին օրվա ժամը 24:00-ին.

6) **տեխնիկական պայմաններ՝** մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին միանալու, բաժանորդին մատակարարված խմելու ջուրը

հաշվառելու, մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի անվտանգ շահագործումն ապահովելու նպատակով մատակարարի կողմից առաջադրվող պայմաններ, որոնք սահմանվում են՝ ելնելով մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի թողունակության, հուսալիության, այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը չխախտելու և դիմող անձի նոր միացման համար անհրաժեշտ ընդլայման աշխատանքները նվազագույն ծախսերով իրականացնելու պայմաններից:

## 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2. Մատակարարը պարտավորվում է բաժանորդին մատուցել՝

խմելու ջուր և ջրահեռացում
(խմելու ջրի մատակարարման և (կամ) ջրահեռացման(կեղտաջրերի մաքրման)

ծառայություններ (այսուհետ՝ ծառայություններ), իսկ բաժանորդը՝ վճարել դրանց դիմաց՝ կանոններով և սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

## 3.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Մատակարարի և բաժանորդի փոխհարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, կանոններով, սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով:

4. Բաժանորդը պարտավոր է՝

1) վճարել մատուցված ծառայությունների դիմաց՝ կանոններով և սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում,
2) թույլ չտալ առևտրային հաշվառքի սարքի խախտում,
3) պահպանել հեռացվող կեղտաջրերի բաղադրությունը՝ համաձայն տեխնիկական պայմանների,
4) մատակարարի ներկայացուցչի կողմից ծառայողական վկայական ներկայացնելու դեպքում չխոչընդոտել նրա մուտքն իր սեփականությունը հանդիսացող կամ այլ իրավական հիմքով տիրապետվող տարածք՝ առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցման, ապօրինի միացման կամ առևտրային հաշվառքի սարքի (անկախ դրա պատկանելությունից) խախտման դեպքերի առկայության համատեղ ստուգման նպատակով,
5) առևտրային հաշվառքի սարքի խախտման կամ մատակարարված խմելու ջրի որակի վերաբերյալ կասկած առաջանալու պարագայում առաջին իսկ հնարավորության դեպքում այդ մասին տեղեկացնել մատակարարին,
6) ջրամատակարարվող տարածքի նկատմամբ իրավունքի դադարման դեպքում դիմել մատակարարին՝ վերջնահաշվարկ կատարելու, սույն պայմանագիրը լուծելու և ծառայությունների մատուցումը դադարեցնելու համար, ինչի վերաբերյալ մատակարարը տեղեկանք է տալիս բաժանորդին:



5. Բաժանորդն իրավունք ունի՝

1) մատակարարի կողմից նախորդ հաշվարկային ամսում մատուցված ծառայությունների դիմաց հաշվարկային փաստաթուղթ չներկայացնելու դեպքում կանոններով սահմանված կարգով չվճարել մատուցված ծառայությունների դիմաց,
2) պահանջել, որ մատակարարն առևտրային հաշվառքի սարքի հետ կապված որևէ աշխատանք, ներառյալ ապահավաքակցումը կամ ստուգաչափումը, իրականացնի իր ներկայությամբ՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում,
3) կապարակնքել առևտրային հաշվառքի սարքը,
4) մասնակցել առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցմանը:

6. Մատակարարը պարտավոր է՝

1) ապահովել բաժանորդին ծառայությունների հուսալի մատուցումը՝ ծառայություններին ներկայացվող նորմատիվ պահանջներին համապատասխան, իսկ սույն պայմանագրով նախատեսված դեպքերում նաև՝ պայմանագրով ամրագրված չափաքանակներով,
2) իր հաշվին իրականացնել առևտրային հաշվառքի սարքի տեղակայումը և կապարակնքումը՝ կանոններով սահմանված կարգով,
3) առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցումը, ստուգաչափումն իրականացնել կանոններով սահմանված կարգով և ժամկետում,
4) առևտրային հաշվառքի սարքի ստուգաչափման դեպքում իր հաշվին տեղակայել նոր առևտրային հաշվառքի սարք՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում,
5) կանոններով սահմանված կարգով և ժամկետում սպառիչ պատասխանել բաժանորդի դիմումին՝ հանգամանորեն ներկայացնելով դիմումի առնչությամբ գործող իրավական դաշտը, կողմերի իրավունքներն ու պարտականությունները,
6) բաժանորդի ջրամատակարարման դադարեցումը կամ ընդհատումը, դրա վերականգնումը, ինչպես նաև այդ մասին բաժանորդին իրազեկումն իրականացնել կանոններով սահմանված կարգով և ժամկետում,
7) կազմել և բաժանորդին ներկայացնել մատակարարված ծառայությունների համար հաշվարկային փաստաթղթեր՝ սույն պայմանագրի և կանոնների համաձայն,
8) բաժանորդի կողմից հաշվարկային փաստաթղթում վճարման ենթակա գումարի հաշվարկի ճշտությանը կասկածելու դեպքում վերջինիս պահանջով կանոններով սահմանված ժամկետում պարզաբանել մատուցված ծառայությունների քանակի և դրանց դիմաց վճարման ենթակա գումարի հաշվարկված մեծությունների ճշտությունը, անհրաժեշտության դեպքում կանոնների համաձայն կատարել ուղղում, չդադարեցնել բաժանորդի ջրամատակարարումը, եթե վերջինս վճարել է ծառայությունների՝ իր կողմից չվիճարկվող մասի արժեքը: Բաժանորդը պետք է ողջամտորեն հիմնավորի իրեն մատուցված ծառայությունների վիճարկվող մասի արժեքը՝ հիմնավորումները գրավոր ներկայացնելով մատակարարին,
9) գործարկել բաժանորդին հասանելի շուրջօրյա հեռախոսակապ:

7. Մատակարարն իրավունք ունի՝

1) Բաժանորդին ծառայողական վկայական ներկայացնելով և վերջինիս սեփականությունը հանդիսացող կամ այլ իրավական հիմքով տիրապետվող

տարածք մուտք գործելով, բաժանորդի հետ համատեղ ստուգել առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցման, պլոմբի միացման կամ առևտրային հաշվառքի սարքի (անկախ դրա պատկանելությունից) խախտման դեպքերի առկայությունը,

2) միակողմանի լուծել սույն պայմանագիրը՝ բաժանորդի կողմից սույն պայմանագրի 4-րդ կետի 6-րդ ենթակետով նախատեսված պարտավորությունը չկատարելու դեպքում:

### 4. ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

8. Բաժանորդին հաշվարկային ամսում մատակարարված խմելու ջրի քանակը որոշվում է պայմանագրի հավելվածում նշված առևտրային հաշվառքի սարքի գրանցած ցուցմունքներով, իսկ դրա բացակայության դեպքում՝ կանոնների համաձայն:

9. Ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) դեպքում հաշվարկման և վերահաշվարկման ժամանակ հեռացվող ջրի (մաքրվող կեղտաջրերի) քանակն ընդունվում է հավասար բաժանորդին մատակարարված խմելու ջրի քանակին: Սույն պայմանագրով կարող է սահմանվել, որ հեռացվող ջրի (մաքրվող կեղտաջրերի) քանակը հաշվարկվում է առևտրային հաշվառքի սարքի միջոցով:

10. Առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքը գրանցում է մատակարարը՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում:

11. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում կատարվում է բաժանորդին մատակարարված խմելու ջրի քանակի և արժեքի վերահաշվարկ՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում:

12. Բաժանորդի կողմից վերահաշվարկի արդյունքին անհամաձայնության դեպքում տարաձայնությունները լուծվում են կանոններով սահմանված կարգով և ժամկետներում, ընդ որում՝ վերահաշվարկված խմելու ջրի արժեքի՝ բաժանորդի կողմից ողջամտորեն հիմնավորված չվճարվող մասի վճարման դեպքում բաժանորդին ծառայությունների մատուցումը չի դադարեցվում՝ մինչև վեճի վերջնական լուծումը:

### 5. ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

13. Հաշվարկային ամսվա ընթացքում բաժանորդին մատուցված ծառայությունների արժեքը որոշվում է հանձնաժողովի սահմանած սակագների և մատակարարված ծառայությունների քանակի արտադրյալով:

14. Հանձնաժողովի սահմանած սակագնի փոփոխման դեպքում նոր սակագինն ուժի մեջ է մտնում հանձնաժողովի սահմանած ժամկետից:

15. Հաշվարկային ամսվա համար բաժանորդին մատուցված ծառայությունների դիմաց մատակարարը կազմում և բաժանորդին է ներկայացնում հաշվարկային փաստաթուղթ՝ կանոններով սահմանված կարգով:

16. Բաժանորդը հաշվարկային ամսվա համար իրեն մատուցված ծառայությունների դիմաց վճարում է կանոններով սահմանված կարգով:



17. Կանոններով սահմանված ժամկետում վճարում չկատարվելու դեպքում մատակարարը կանոններով սահմանված կարգով և ժամկետում զգուշացնում է բաժանորդին՝ վճարման, իսկ վճարումը չկատարելու դեպքում՝ ծառայությունների մատուցման դադարեցման մասին: Եթե զգուշացման պահից կանոններով սահմանված ժամկետում բաժանորդը վճարում չի կատարում, ապա մատակարարն իրավունք ունի դադարեցնել ծառայությունների մատուցումը: Բաժանորդի կողմից պարտքն ամբողջությամբ վճարելուց և այդ մասին մատակարարին հայտնելուց (այդ թվում՝ հեռախոսով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով) հետո Մատակարարը պարտավոր է վերսկսել բաժանորդին ծառայությունների մատուցումը: Ծառայությունների մատուցումը վերսկսելուց առաջ մատակարարը իրավունք ունի տեղում ստուգել բաժանորդի վճարումը հաստատող փաստաթուղթը:

18. Մատակարարն իրավունք չունի մատակարարվող ծառայությունների համար բաժանորդից պահանջել վճարել կանխավճար կամ ներկայացնել վճարման երաշխիք:

19. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում վերահաշվարկած խմելու ջրի արժեքը և տույժերը (հաշվարկված լինելու դեպքում) վճարվում են կանոններով սահմանված կարգով և ժամկետում:

### 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

20. Պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով, կանոններով և Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

21. Մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարը չվճարելու դեպքում ոչ բնակիչ բաժանորդը մատակարարին յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարում է տուժանք՝ չվճարված գումարի 0,1 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

22. Մատակարարը կանոններով սահմանված դեպքերում բաժանորդին վճարում է տուժանք՝ կանոններով սահմանված չափով և կարգով:

23. Մատակարարը և բաժանորդը միմյանց պատճառած վնասի համար կրում են պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

### 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

(լրացնում են Կողմերը)

24. Սույն գլխում կողմերի սահմանած այլ պայմանները չեն կարող հակասել սույն պայմանագրին, կանոններին և հանձնաժողովի այլ իրավական ակտերին:

25. ______________________________________________________:

### 8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

26. Կողմերը պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չեն կրում, եթե այն հետևանք է ֆորս մաժորի:

Պայմանագրի իմաստով ֆորս մաժոր են համարվում արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են կողմերի կամքից անկախ և, միևնույն ժամանակ, անկախ վերջիններիս գործադրած ջանքերից, խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված կողմերի գործողություններին: Սույն պայմանագրի իմաստով արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ են բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հրդեհներ, ձնաբքեր, սողանքներ), գործադուլները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները: Սույն կետը չի սահմանափակում կողմերի իրավունքը նկարագրվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել հանձնաժողով՝ դրանք ֆորս մաժոր ճանաչելու համար:

27. Կողմերը պարտավոր են վերոհիշյալ իրավիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

## 9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

28. Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հանձնաժողովի միջնորդությամբ: Սույն պայմանը չի սահմանափակում կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

## 10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ

29. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով:

30. Սույն պայմանագիրը կնքված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր կողմի համար:

31. Հանձնաժողովի կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման (մատակարար-ոչ բնակիչ բաժանորդ) նոր օրինակելի ձև հաստատելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում դրանք ուժի մեջ են մտնում հանձնաժողովի սահմանած ժամկետից: Կողմերը պարտավոր են հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում:

32. Սույն պայմանագիրը լուծվում է՝

1) կողմերի փոխադարձ համաձայնությամբ.

2) բաժանորդի կողմից միակողմանի՝ այդ մասին մատակարարին տեղեկացնելու և մատուցված ծառայությունների համար ամբողջությամբ վճարելու պայմանով.

3) մատակարարի կողմից միակողմանի՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, կանոններով և սույն պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:

33. Սույն պայմանագրի փոփոխումը կամ դադարումը կողմերին չի ազատում մինչ այդ պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունների կատարումից:



## 11. ԿՈՂՄԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

34. Կողմերը պարտավոր են գրությունները, ծանուցումները և այլ փաստաթղթերը միմյանց հանձնել պատշաճ ձևով: Փաստաթղթերը համարվում են պատշաճ ձևով հանձնված, եթե դրանք ուղարկվել են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ՝ սույն պայմանագրով նշված ծանուցման վայրի հասցեով կամ հանձնվել են ստացականով, եթե առանձին դեպքերի համար կանոններով կամ սույն պայմանագրով նախատեսված չէ պատշաճ հանձնման կոնկրետ ձև:

35. Կողմերը պարտավոր են սույն պայմանագրում նշված ծանուցման հասցեի փոփոխության դեպքում գրավոր տեղեկացնել միմյանց ծանուցման նոր հասցեի վերաբերյալ:

36. Պայմանագրի անբաժանելի մաս է կազմում առևտրային հաշվառքի սարքի վերաբերյալ հավելվածը:

Մատակարար՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ
Գտնվելու վայրը՝ Ք.Երևան,Աբովյան 66ա
Հեռախոս՝ 1-85
ՀՎՀՀ՝ 02655115
Էլ. փոստ՝ office@vjur.am
Հ/հ 11500351562015
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Գործունեության լիցենզիա ԼՋ N 0001
Գլխավոր տնօրեն
______ Մ.Շահինյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)
Կ.Տ.
Կատարող՝ ______
(ստորագրություն)
______
(Սպասարկման բաժնի անվանումը)
______
(պաշտոնը և անուն, ազգանուն

Բաժանորդ՝ ______
Գտնվելու վայրը՝ (Բնակության վայրը)՝ ______
Ծանուցման հասցեն՝ ______
Էլ.փոստ ______
Հեռախոս 060-65-40-38
ՀՎՀՀ 02505511
Բանկ ______
Հ/հ 900011556355
Ղեկավար (ֆիզիկական անձ)
______
(ստորագրություն, անուն, ազգանուն
Կ.Տ
(կազմակերպության դրոշմը)

# Հավելված 1

## Միասնական պայմանագրում ներառված բաժանորդների ցանկ

| Հ/Հ | Քարտի համարը | Ստորաբաժանման անվանումը | Հասցե |
|---|---|---|---|
| 1 | 2-10-25 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ 13 |
| 2 | 7-10-2070 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Ա.ԱՐՄԵՆԱԿՅԱՆԻ 129 |
| 3 | 01-0002-101 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆԻ 100 |
| 4 | 06-0089-39-1 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ 39Ա |
| 5 | 4-13-51 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ 39/1 |
| 6 | 06-0097-2-1 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | ՄԱՆԱՆԴՅԱՆ 2/1 |
| 7 | 06-0240-99 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | ԲԱՏԻԿՅԱՆԻ 99 1 |
| 8 | 7-10-121 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Կ.ՈՒԼՆԵՑՈՒ 68 |
| 9 | 44-3011-213 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | ԽՈՐԵՆԱՑՈՒ 312 |
| 10 | 7-10-2002 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 3 ՋԱՆԳ. ԲԱՂՅԱՆ 2 |
| 11 | 7-11-712 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԻ 23 |
| 12 | 06-0252-32-1 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | ՍԵԲԱՍՏԻԱ 32 |
| 13 | 06-0300-55-1 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | ԾԱՐԱՎ ԱՂԲՅՈՒՐ 55/1 |
| 14 | 06-1241-56 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Ք.ԵՂՎԱՐԴ ԿՆՈՒՆՅԱՆՑ 1 ՆՐԲ. 38/1 |
| 15 | 369100540 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Ք.ՀՐԱԶԴԱՆ, ՄԻԿՐՈՇՐՋԱՆ ԹԱՂ. 13-ՐԴ ՓՈՂ 24 |
| 16 | 402744812 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Գ.ԱԽՈՒՐՅԱՆ, ԳՅՈՒՄՐՈՒ Խճ. 42 |
| 17 | 234885162 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Ք.ՏԱՇԻՐ, Վ.ՍԱՐԳՍՅԱՆԻ 95 |
| 18 | 67138722 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Ք.ԱՐՏԱՇԱՏ, ԻՍԱԿՈՎԻ 47 |
| 19 | 83894920 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Ք.ՄԱՍԻՍ, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ 4 |
| 20 | 117454429 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Ք.ՎԵԴԻ, ԱՐԱՐԱՏՅԱՆ 55 |
| 21 | 419443188 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Ք.ԱՐԹԻԿ, ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 1 |
| 22 | 704645285 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Գ.ԱՇՈՑՔ, 0 |
| 23 | 335557320 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Ք.ՉԱՐԵՆՑԱՎԱՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ 13 |
| 24 | 503316511 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Ք.ՍԻՍԻԱՆ, Ն.ԱԴՈՆՑԻ 4 |
| 25 | 436209891 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Ք.ՋԵՐՄՈՒԿ, ՁԱԽԱՓՆՅԱԿ 2 Փ. 3 |
| 26 | 452997044 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Ք.ԿԱՊԱՆ, Մ. ՍՏԵՓԱՆՅԱՆԻ 3 |
| 27 | 603980924 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Ք.ՃԱՄԲԱՐԱԿ, Պ.ՍԵՎԱԿԻ 7 |
| 28 | 201330746 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Ք.ՎԱՐԴԵՆԻՍ, ՌՈՄԱՆԻ 90 |
| 29 | 301993857 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Ք.ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ, Զ.ԱՆԴՐԱՆԻԿԻ 3 |
| 30 | 1023411648 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Ք.ԱՐՄԱՎԻՐ, Խ.ԱԲՈՎՅԱՆԻ 137 |
| 31 | 1023428381 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Գ.ԲԱՂՐԱՄՅԱՆ (ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՇՐՋ), ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ 1/4 |
| 32 | 402728435 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Ք.ՄԱՐԱԼԻԿ, ՄԱԴԱԹՅԱՆԻ 1 |
| 33 | 218148857 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Ք.ՎԱՆԱՁՈՐ, Գ.ՆԺԴԵՀԻ 0 |
| 34 | 637536407 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Ք.ԹԱԼԻՆ, ԳԱՅԻ 1 |
| 35 | 402744099 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Գ.ԱՄԱՍԻԱ, 25 Փ. 4 |
| 36 | 184827264 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Ք.ՍԵՎԱՆ, ՆԱԻՐՅԱՆ 164 |
| 37 | 587207158 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Ք.ԱՊԱՐԱՆ, Մ.ԲԱՂՐԱՄՅԱՆԻ 26 |
| 38 | 654817454 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Ք.ՄԱՐՏՈՒՆԻ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 2 |
| 39 | 167881386 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Ք.ԳԱՎԱՌ, ՍԱՅԱԴՅԱՆԻ 95 |
| 40 | 553655939 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Ք.ԴԻԼԻՋԱՆ, ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ 66 |
| 41 | 352338310 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Ք.ՀՐԱԶԴԱՆ, ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի 0 |
| 42 | 268446010 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Ք.ԱԼԱՎԵՐԴԻ, ԵՐԵՎԱՆՅԱՆ Խճ. 5 |
| 43 | 486546091 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Ք.ԳՈՐԻՍ, Մ.ՄԱՇՏՈՑԻ 3 |
| 44 | 687868771 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Ք.ՎԱՅՔ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 16 |
| 45 | 654316354 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Ք.ՄԱՐՏՈՒՆԻ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 2 |

| | | | |
|---|---|---|---|
| 46 | 520099990 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Ք.ԻՋԵՎԱՆ, ՎԱՍԻԼՅԱՆ 2 |
| 47 | 218148634 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Ք.ՎԱՆԱՁՈՐ, Գ.ՆԺԴԵՀԻ 14 |
| 48 | 402744866 | ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | Ք.ԳՅՈՒՄՐԻ, ԿԱՅԱՐԱՆԱՄԵՐՁ ՀՐԱՊԱՐԱԿ 2 |

Մատակարար՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ

Գտնվելու վայրը՝ ք. Երևան,Աբովյան 66ա

«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Հ/Հ 11500351562015

ՀՎՀՀ 02655115

Գլխավոր տնօրեն------------------------------ Մ. Շահինյան

«---------»------------------------------2021թ

Բաժանորդ՝ Միասնական Սոցիալական Ծառայություն

Գտնվելու վայրը՝ ք. Երևան, Նալբանդյան 13

Բանկ՝ ՀՀ Ֆին. Նախ. Գործ. վարչ.

Հ/Հ 900011556355

ՀՎՀՀ 02505511

------------------------------

«---------»------------------------------2021թ

## ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՔԻ ՍԱՐՔԻ ՄԱՍԻՆ

### 1. Առևտրային հաշվառքի սարքի տեխնիկական տվյալները

| № | Քարտի համար | Միացման համար | Մակնիշը | Գործարանային № | Առևտրային հաշվառքի սարքի տրամագիծը | Տեղադրման վայրը | Տեղադրման ամսաթիվը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 01-0002-101 | 01-0002-101_1 | KMEI , SUPER , ATREO | 005625 | 15 | Բաժ. տարածք | 26.12.03 |
| 2 | 06-0089-39-1 | 06-0089-39-1_1 | GSD / ETK / ARAZEN | 008249 | 15 | Բաժ. տարածք | 10.05.16 |
| 3 | 06-0097-2-1 | 06-0097-2-1_1 | S (100,101,130,140,2000) / ELS | 5983510286 | 40 | Բաժ. տարածք | 18.05.18 |
| 4 | 06-0240-99 | 06-0240-99_1 | CBK-1.5, CBK-2.5 / VEGA | 1016057466408 | 20 | Բաժ. տարածք | 01.10.17 |
| 5 | 06-0300-55-1 | 06-0300-55-1_1 | AQUARIUS | 342139 | 15 | Բաժ. տարածք | 10.06.14 |
| 6 | 06-0300-55-1 | 06-0300-55-1_2 | AQUARIUS | 342065 | 15 | Բաժ. տարածք | 10.06.14 |
| 7 | 06-1241-56 | 06-1241-56_1 | CBK-1.5, CBK-2.5 / VEGA | 1016058325100 | 20 | Բաժ. տարածք | 01.08.17 |
| 8 | 1023411648 | 1023411648_1 | M (100,110,120,190) / ELSTER | J17LA818331X | 15 | Բաժ. տարածք | 06.02.15 |
| 9 | 1023428381 | 1023428381_1 | CXB/CGB-15 / BETAR | 0000605 | 0 | Բաժ. տարածք | 27.09.13 |
| 10 | 117454429 | 117454429_1 | KMEI , SUPER , ATREO | 02837 | 0 | Բաժ. տարածք | 30.03.13 |
| 11 | 167881386 | 167881386_1 | M (100,110,120,190) / ELSTER | 5983570165 | 25 | Բաժ. տարածք | 14.12.20 |
| 12 | 184827264 | 184827264_1 | SJ-SDC/PLUS | 18016869 | 20 | Բաժ. տարածք | 07.02.20 |
| 13 | 2-10-25 | 2-10-25_1 | WPH / ZENNER | 01746406 | 32 | Բաժ. տարածք | 13.11.02 |
| 14 | 201330746 | 201330746_1 | KMEI , SUPER , ATREO | 13010146 | 0 | Բաժ. տարածք | 07.11.14 |
| 15 | 218148857 | 218148857_1 | GSD / B METERS | 463701 | 32 | Բաժ. տարածք | 31.03.10 |
| 16 | 234885162 | 234885162_1 | SJ-SDC/PLUS | 19009837 | 15 | Բաժ. տարածք | 16.12.19 |
| 17 | 268446010 | 268446010_1 | KMEI , SUPER , ATREO | 14081865 | 0 | Բաժ. տարածք | 21.04.15 |
| 18 | 301993857 | 301993857_1 | SJ-SDC/PLUS | J17LA911833S | 15 | Բաժ. տարածք | 23.09.16 |
| 19 | 335557320 | 335557320_1 | LXSG-13D / NINGBO WATERM | 18016458 | 20 | Բաժ. տարածք | 30.06.13 |
| 20 | 369100540 | 369100540_1 | 1 ԳՈՐԾ. ՍՈՎՈՐԱԿԱՆ ՋՐԱՉԱՓ | 08451164 | 25 | Բաժ. տարածք | 01.03.18 |
| 21 | 4-13-51 | 4-13-51_1 | 1 ԳՈՐԾ. ՍՈՎՈՐԱԿԱՆ ՋՐԱՉԱՓ | 9366788 | 50 | Բաժ. տարածք | 21.07.03 |
| 22 | 402728435 | 402728435_1 | CXB/CGB-15 / BETAR | 95751 | 0 | Բաժ. տարածք | 30.10.13 |
| 23 | 402744099 | 402744099_1 | WDEK30 / B METERS | 463703 | 32 | Բաժ. տարածք | 01.03.18 |
| 24 | 402744812 | 402744812_1 | GSD / ETK / ARAZEN | 19024696 | 15 | Բաժ. տարածք | 30.01.20 |
| 25 | 402744866 | 402744866_1 | GSD / B METERS | 643701 | 0 | Բաժ. տարածք | 08.09.16 |
| 26 | 419443188 | 419443188_1 | LXSR (15E-100E) / NINGBO JI | 0612707 | 0 | Բաժ. տարածք | 14.05.15 |
| 27 | 436209891 | 436209891_1 | MINOMESS / MINOL INTERNA | 077030827 | 0 | Բաժ. տարածք | 23.09.13 |
| 28 | 44-3011-213 | 44-3011-213_1 | KMEI , SUPER , ATREO | 05988 | 15 | Բաժ. տարածք | 15.05.09 |
| 29 | 452997044 | 452997044_1 | CXB/CGB-15 / BETAR | 5801347 | 0 | Բաժ. տարածք | 31.05.13 |
| 30 | 503316511 | 503316511_1 | GSD / ETK / ARAZEN | 01654891 | 0 | Բաժ. տարածք | 31.01.11 |
| 31 | 520099990 | 520099990_1 | LXSC | 00310 | 0 | Բաժ. տարածք | 30.11.08 |
| 32 | 553655939 | 553655939_1 | SJ-SDC/PLUS | 18015394 | 20 | Բաժ. տարածք | 21.02.20 |
| 33 | 587207158 | 587207158_1 | LXSG-13D / NINGBO WATERM | 18017682 | 15 | Բաժ. տարածք | 01.10.20 |
| 34 | 603980924 | 603980924_1 | SJ-SDC/PLUS | 19003020 | 15 | Բաժ. տարածք | 30.06.14 |
| 35 | 637536407 | 637536407_1 | H (4000,4100,4200,4300,4400) | JI7LB702092 | 20 | Բաժ. տարածք | 10.09.15 |
| 36 | 654817454 | 654817454_1 | SJ-SDC/PLUS | 19025473 | 15 | Բաժ. տարածք | 01.10.20 |
| 37 | 67138722 | 67138722_1 | KMEI , SUPER , ATREO | 12007009 | 0 | Բաժ. տարածք | 24.05.16 |
| 38 | 687868771 | 687868771_1 | S (100,101,130,140,2000) / ELS | J19LA606860 K | 15 | Բաժ. տարածք | 14.06.17 |
| 39 | 7-10-121 | 7-10-121_1 | 1 ԳՈՐԾ. ՍՈՎՈՐԱԿԱՆ ՋՐԱՉԱՓ | 179765 | 15 | Բաժ. տարածք | 01.07.05 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 40 | 7-10-2002 | 7-10-2002_1 | 1 ԳՈՐԾ. ՍՈՎՈՐԱԿԱՆ ՋՐԱՉԱՓ | 162324 | 15 | Բաժ. տարածք | 01.10.03 |
| 41 | 7-10-2070 | 7-10-2070_1 | CBK-1.5, CBK-2.5 / VEGA | 1016024002103 | 15 | Բաժ. տարածք | 18.12.08 |
| 42 | 7-11-712 | 7-11-712_1 | FLODIS / ITRON FRANCE | 342134 | 15 | Բաժ. տարածք | 17.08.07 |
| 43 | 704645285 | 704645285_1 | S (100,101,130,140,2000) / ELS | J17LA705360F | 15 | Բաժ. տարածք | 27.10.16 |
| 44 | 83894920 | 83894920_1 | CBK / ARZAMASKIY PRIBORC | 1016012556700 | 0 | Բաժ. տարածք | 29.09.16 |

Մատակարար՝ «ՎեոլիաՋուր» ՓԲԸ
Գտնվելուվայրը՝Ք.Երևան,Աբովյան 66ա
Հեռախոս՝ 1-85
ՀՎՀՀ ՝ 02655115
Էլ. փոստ՝ office@veoliadjur.am
Հ/հ 11500351562015
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Գործունեությանլիցենզիա ԼՋ N 0001
Գլխավոր տնօրեն

Մ. Շահինյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.

Կատարող՝
(Ստորագրություն)

(Ստորաբաժանման անվանումը)

(պաշտոնը, անուն, ազգանունը)

Բաժանորդ՝ Միասնական Սոցիալական Ծառայություն

Գտնվելու վայրը՝ Նալբանդյան 13

Ծանուցման հասցեն՝ Նալբանդյան 13

Էլ. փոստ soghomon.matevosyan@sif.am

Հեռախոս 060-65-40-38

ՀՎՀՀ 02505511

Բանկ՝ ՀՀ Ֆին. Նախ. Գործ. Վարչ.

Հ/հ 900011556355

Ղեկավար (ֆիզիկական անձ)

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ

(առկայության դեպքում)

**Հավելված**
խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման
(կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման
(մատակարար- ոչ բնակիչ բաժանորդ)
օրինակելի պայմանագրի

## ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՔԻ ՍԱՐՔԻ ՄԱՍԻՆ

### 1. Առևտրային հաշվառքի սարքի տեխնիկական տվյալները

| № | Անվանումը | Մակնիշը | Գործարանային № | Առևտրային հաշվառքի սարքի տրամաչափը | Տեղադրման վայրը | Տեղադրման ամսաթիվը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | | [illegible] | | | | |
| 2. | | | | | | |
| 3. | | | | | | |
| 4. | | | | | | |

Մատակարար՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ
Գտնվելու վայրը՝ Ք.Երևան,Աբովյան 66ա
Հեռախոս՝ 1-85
ՀՎՀՀ ՝ 02655115
Էլ. փոստ՝ office@vjur.am
Հ/հ 11500351562015
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Գործունեության լիցենզիա ԼՋ N 0001
Գլխավոր տնօրեն

__________ Մ.Շահինյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.

Կատարող՝ __________
(Ստորագրություն)

__________
(Ստորաբաժանման անվանումը)

__________
(պաշտոնը և անուն, ազգանունը)

Բաժանորդ՝ [illegible]

Գտնվելու վայրը՝(բնակության վայրը)՝ [illegible]
Ծանուցման հասցեն՝ __________

Էլ. փոստ —

Հեռախոս 060 654038

ՀՎՀՀ 02505511

Բանկ [illegible]

Հ/հ 900011556355

Ղեկավար (ֆիզիկական անձ)

__________ [illegible]
ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ (առկայության դեպքում)

Համաձայնագիր 1

01.04.2021թ կնքված N 2-10-25 ծածկագրով՝ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան «19» նոյեմբերի 2021թ.

Միասնական սոցիալական ծառայությունը, այսուհետ՝ «Բաժանորդ», ի դեմս Գլխավոր քարտուղարի պ/կ Ա. Արշակյանի մի կողմից, և Վեոլիա Ջուր ՓԲԸ-ն այսուհետ՝ «Մատակարար», ի դեմս Գլխավոր տնօրեն Մ. Շահինյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև կողմեր, հիմք ընդունելով Միասնական սոցիալական ծառայության և Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի միջև 01.04.2021թ. կնքված N2-10-25 պայմանագիրը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմերն որոշեցին Պայմանագրի N1 Հավելվածի ցանկի 41-րդ տողը փոփոխել և շարադրել հետևյալ բովանդակությամբ.

| Հ/Հ | Քարտի համար | Ստորաբաժաման անվանումը | Հասցե |
|---|---|---|---|
| 41 | 251664489 | Միասնական սոցիալական ծառայություն | ք. Սպիտակ, Թորոսյան 13 |

1.2 Առևտրային հաշվառքի սարքի տեխնիկական տվյալների Հավելվածի 45-րդ տողը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

| Անվանումը | Մակնիշը | Գործարանային № | Առևտրային հաշվառքի սարքի տրամագիծը | Տեղադրման վայրը | Տեղադրման ամսաթիվը |
|---|---|---|---|---|---|
| 251664489_1 | B-METERS | 201251864 | 15 | Բաժ. տարածք | 01.02.2013թ. |

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
2.2. Սույն համաձայնագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:
2.3. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Միասնական Սոցիալական ծառայություն
Ք.Երևան, Նալբանդյան 13
ՀՀ Ֆին. Նախ. Գործ. Վարչ.
Հ/Հ 900011556355
ՀՎՀՀ 02505511

Գլխ. քարտուղարի պ/կ ____________ Ա. Արշակյան
(ստորագրություն)

Կ.Տ

ՄԱՏԱԿԱՐԱՐ
«Վեոլիա Ջուր» ՓԲԸ
ք.Երևան Աբովյան 66ա
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500351562015
ՀՎՀՀ 02655115

Գլխ. տնօրեն ____________ Մ. Շահինյան
(ստորագրություն)

Կ.Տ